ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

օգոստոսի 2021 թվականի №Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի 2021 թվականի մայիսի 10-ի N303-ՀՆ հրամանի հիման վրա ստեղծված աշխատանքային խումբը 2021 թվականի մայիսի 17-21-ն իրականացրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սպասարկման աշխատանքների կատարման որակին վերաբերող տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) հավաստիության ստուգման մոնիթորինգ (այսուհետ՝ Մոնիթորինգ), որի արդյունքում պարզվել է, որ՝

ա. 52 դեպքում էլեկտրամատակարարման ընդհատման տևողությունը, ըստ Ընկերության ստորաբաժանումների կարգավարական ծառայությունների օպերատիվ մատյանների, գերազանցում է հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 28-րդ կետով սահմանված ընդհատման թույլատրելի տևողությունը, իսկ Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ նշված ընդհատումների տևողությունը ներկայացված է թույլատրելիի սահմաններում,

բ. 51 դեպքում էլեկտրամատակարարման ընդհատման տևողությունը, ըստ Ընկերության օպերատիվ մատյանների, չի գերազանցում Կանոնների 28-րդ կետով սահմանված ընդհատման թույլատրելի տևողությունը, սակայն նշված

ընդհատումների տվյալները չեն համապատասխանում Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների տվյալներին,

գ. Ընկերությունը տարեկան կտրվածքով չի իրականացնում Կանոնների 28.1-րդ կետով սահմանված՝ սպառողների պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության ժամկետների հաշվառում,

2) Մոնիթորինգի արդյունքում կազմված արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) Հանձնաժողովի սույն թվականի հունիսի 4-ի № ԿՍ/34.4-Մ2-10/1928-2021 գրությամբ ներկայացվել է Ընկերությանը,

3) Ընկերությունը սույն թվականի հունիսի 29-ի № Ե-303-21 գրությամբ Մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված դեպքերի վերաբերյալ հայտնել է, որ՝

ա. 19 դեպքերում առկա են «Հիդրոօդերևութաբանական և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի հուլիսի 23-ի №08-ԼԱ-219 և սույն թվականի հունվարի 29-ի №08-ԼԱ-33, փետրվարի 18-ի №08-ԼԱ-73, ապրիլի 1-ի №08-ԼԱ-186, հունիսի 22-ի №08-ԼԱ-454 գրությունները, ըստ որոնց՝ առկա են եղել եղանակային անբարենպաստ պայմաններ, որոնց պարագայում, ըստ տեխնիկական կանոնակարգերի, չի թույլատրվում իրականացնել վերանորոգման աշխատանքներ: Ուստի հիշյալ դեպքերում առկա է եղել Ընկերության պարտավորությունների կատարմանը խոչընդոտող ֆորսմաժորային իրավիճակ,

բ. 2 դեպքերը ընդհատումներ չեն, այլ էլեկտրական էներգիայի որակական նորմերից շեղումներ են (<0>-ի խզում) և թյուրիմացաբար ներառվել են Տեղեկատվության մեջ,

գ. 31 դեպքերի վերաբերյալ Ընկերության ստորաբաժանումներից ստացվել են Կանոնների 28-րդ կետի խախտումների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, որոնք կներկայացվեն փոխհատուցման,

դ. օպերատիվ մատյաններից դուրս բերված և ներկայացված հաշվետվությունների տվյալներին անհամապատասխանությունների 51 դեպքերում հաշվետվությունները կազմելիս էլեկտրամատակարարման ընդհատման և վերականգման ժամերը գրանցվել են տարբեր աղբյուրներից (էլեկտրոնային գրանցամատյան, թղթային ձևաչափի օպերատիվ մատյան, կարգագրերի հաշվառման մատյան և այլն), ինչը հանգեցրել է փաստված անհամապատասխանություններին,

4) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2021 թվականի հուլիսի

14-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոնների 28-րդ և 28.1-րդ կետերի հնարավոր խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով,

5) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 26-ի № Ե-368-21 գրությամբ հաստատել է իր սույն թվականի հունիսի 29-ի № Ե-303-21 գրությամբ նշված պարզաբանումները և հայտնել, որ Ընկերությունում մշակվում է տարեկան կտրվածքով բաժանորդների էլեկտրամատակարարման ընդհատումների գումարային տևողության հաշվարկի ծրագիր,

6) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) 37-րդ կետի շրջանակում Հանձնաժողովի կողմից 2021 թվականի հուլիսի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթով լրիվ, օբեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովը սույն թվականի օգոստոսի 10-ի №ՍԱ/34.4-Մ2-10/2703-2021 և օգոստոսի 23-ի №ԳԲ/34.4-Մ2-10/2864-2021 գրություններով Ընկերությունից պահանջել է ներկայացնել տեղեկատվություն Արձանագրության մեջ նշված էլեկտրա-մատակակարման ընդհատումների հետևանքով հոսանքազրկված սպառողների քանակի վերաբերյալ, որոնց դեպքում ընդհատման տևողությունը, ըստ Ընկերության ստորաբաժանումների կարգավարական ծառայությունների օպերատիվ մատյանների, գերազանցում է Կանոնների 28-րդ կետով սահմանված ընդհատման թույլատրելի տևողությունը, ինչպես նաև վերջիններիս վճարվելիք տույժերի գումարի չափի վերաբերյալ: Միաժամանակ, Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, երկու անգամ 10 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը,

7) Ընկերությունը սույն թվականի օգոստոսի 23-ի №ԳԲ/34.4-Մ2-10/2864-2021 գրությամբ հայտնել է, որ Մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված՝ Կանոնների 28-րդ կետով սահմանված էլեկտրամատակարարման ընդհատումների տևողությունների թվով 31 խախտումների համար 3625 սպառողների, Կանոնների 77-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, վճարվել է 5614125 դրամի չափով տույժ,

8) Կանոնների 28-րդ կետի համաձայն՝ մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան՝

ա. քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ այն սպառողներինը, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 2 ժամում, իսկ մյուս բոլոր դեպքերում՝ 4 ժամում,

բ. գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ այն սպառողներինը, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 2 ժամում, իսկ մյուս բոլոր դեպքերում՝ 8 ժամում,

գ. քաղաքային և գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմաններից դուրս՝ այն սպառողներինը, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 2 ժամում, իսկ մյուս բոլոր դեպքերում՝ 12 ժամում,

9) Կանոնների 28.1-րդ կետի համաձայն՝ Կանոնների 27-րդ և 28-րդ կետերում նշված պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողությունը տարեկան կտրվածքով չպետք է գերազանցի՝ այն սպառողների համար, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 10 ժամը, քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում գտնվող մյուս սպառողների համար՝ 24 ժամը, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ 72 ժամը: Միևնույն ժամանակ, եթե սպառողի (բացառությամբ բնակչության) էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման

վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանել այդ ժամանակահատվածը,

10) Կանոնների 77-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մատակարարը սպառողին վճարում է տույժ էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո՝ Կանոնների 28-րդ կետում սահմանված ժամկետում սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետի խախտման համար, բացառությամբ, եթե էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումները պայմանավորված են եղել էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանա-փակումներ պահանջող իրավիճակներով,

11) Կանոնների 77.1-րդ կետի համաձայն՝ Կանոնների 77-րդ կետի համաձայն տույժը վճարվում է սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2500 դրամը,

12) Կանոնների 80-րդ կետի համաձայն՝ մատակարարը սույն Կանոնների 77-րդ կետում նշված խախտումների համար տույժ չի վճարում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի: Կանոնների իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են մատակարարի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջինիս գործադրած ջանքերից խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: Կանոնների իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները և ապստամբությունները,

13) Լիցենզիայի պայմանների 37-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար,

14) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 28-րդ կետի պահանջը՝ 31 դեպքերում գերազանցելով Կանոնների 28-րդ

կետով սահմանված՝ էլեկտրամատակարարման ընդհատման թույլատրելի տևողությունը, ինչպես նաև Լիցենզիայի պայմանների 37-րդ կետի պահանջը՝ 103 ընդհատման դեպքերի մասին Հանձնաժողով ներկայացնելով ոչ հավաստի տեղեկատվություն: Ընդ որում, թվարկված խախտումներն ուղղակիորեն հանգեցրել են մի խումբ սպառողների իրավունքների խախտման: Փաստվել է նաև, որ Ընկերությունը չի իրականացնում սպառողների պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության տարեկան կտրվածքով ժամկետների հաշվառում:

Ինչ վերաբերում է Ընկերության պարզաբանումներին, ապա Կանոնների 28-րդ կետով սահմանված՝ էլեկտրամատակարարման ընդհատման թույլատրելի տևողության գերազանցման՝ Ընկերության նշած 19 դեպքերում դրանք ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ներկայացված փաստարկների ուժով Հանձնաժողովը համարում է հիմնավոր, իսկ մյուս դեպքերի համար ներկայացված պարզաբանումները չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտումների օբյեկտիվ պատճառներ և ազատել Ընկերությանը դրանց համար կիրառվող պատասխանատվությունից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լիցենզիայի պայմանների 37-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել 10 000 000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Հանձնարարել Ընկերությանը՝

1) մինչև 2022 թվականի հունվարի 1-ը ապահովել սպառողների պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության տարեկան կտրվածքով ժամկետների հաշվառման համակարգի ներդրումը և այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ ապահովելով նաև նշված ժամկետների հետագա հաշվառումը.

2) մեկամսյա ժամկետում Հանձաժողովի կողմից մոնիթորինգ չիրականացված տեղամասերում իրականացնել Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների և օպերատիվ փաստաթղթերի համապատասխանության ուսումնասիրություն և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
օգոստոսի 2021թ.